

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ձեր աղոթքները, Ձեր անմնացորդ նվիրումը արցախյան ազատագրական պայքարին, Ձեր բարոյական և նյութական օգնությունը շոշափելի է ամեն մի արցախցու համար։ Ձեր աջակցությունը սիրագործություն է։ ԼՂՀ Մայրության Հիմնադրամի Նախագահության որոշմամբ, Ձեր ծննդյան 85-ամյակի առիթով, Դուք պարգևատրվել եք «Մայրական Երախտագիտություն Արցախի Քաջորդիներին» մեդալով, որին արժանացել են մեր ժողովրդի կավակներից առավել արժանավորները՝ Արթուր Մկրտչյանը, Ցվետանա Պասկալյովան, Մոնթե Մելքոնյանը, Քերոլայն Քոքսը, Աշոտ Բեկորը և ուրիշներ։ ԼՂՀ Մայրության Հիմնադրամի Նախագահությունը Արցախի մայրերի անունից շնորհավորում է Ձեզ այս պարգևի առթիվ, համբուրում Ձեր Սուրբ Աջը, ցանկանում ղարաբաղյան երկարակեցություն, քաջառողջություն։ Թող Ձեր հոգատար Հայրական սիրտը երկար ու երկար բաբախի համայն հայության բարօրության համար։ Թող Ձեր Սուրբ Աջը անպակաս լինի համայն հայության, ինչպես և արցախահայության գլխից։ Համոզված ենք, որ այսուհետ նույնպես Ձեր աղոթքներում կհիշեք Արցախի որդեկորույս մայրերին, որոնք բազում դարեր ի վեր մեր սուրբ հողի ազատագրման համար երկնել ու ծնել են քաջորդիներ հանուն հայրենյաց։

Աստված օգնական, Վեհափառ Տեր։

Հարգանոք՝

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ստեփանակերտ